Հայաստանի Հանրապետություն
Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր (ՈՀԲԾ)
ՎԶՄԲ փոխառության No.8267AM

ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ –ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

«ՋՕԸ-ների հաշվապահական հաշվառումը վարող մասնագետների համար հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով հաշվետվությունների կազման ուսուցում» ISEP/CQS/SW-13/004Tr

Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային բանկից՝ **Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի (ՈՀԲԾ)** ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների համար:

Խորհրդատվական ծառայությունների («ծառայություններ») ընդհանուր նպատակներն են.

- հաշվապահական հաշվառումը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան կազմակերպելու և վարելու սկզբունքները;
- տարեկան ամբողջական փաթեթով միջանկյալ, հարկային և այլ հաշվետվություններ կազմելու ու ներկայացնելու միասնական հիմունքները և կարգը;
- հարկային և օրենսդրական այլ ակտերը՝ այդ թվում հրահանգները;
- միջազգային ֆինանսական հաշվետվության ստանդարտներ (ՄՖՀՍ/IFRS) կիրառելը;
- հաշվապահական հաշվառման ծրագրային ապահովման փաթեթի նոր տարբերակի կիրառելը:

Ենթադրվում է, որ խորհրդատվական ծառայությունները կսկսվեն **2014թ. հունիսին**: Հանձնարարության տևողությունը **4 (չորս) ամիս** է՝ պայմանագրի ստորագրման պահից:

Սույնով **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը («ՋՏԾԻԳ» ՊՀ)** հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին («Խորհրդատուներ») հայտնել իրենց շահագրգռվածությունը ծառայությունների մատուցման համար: Շահագրգիռ Խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորումն և համապատասխան փորձառությունը ծառայությունները կատարելու համար: Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշները հետևյալն են.

(i) **Ընկերության ընդհանուր որակավորումը** *(գործունեության հիմնական տեսակը և փորձը տարիներով)*՝ **30 միավոր;**
(ii) **Ընկերության փորձը հանձնարարության ոլորտում** *(փորձը ոլորտում (տարիներ) և վերջին հինգ տարիների ընթացքում իրականացրած համանման հանձնարարությունների/աշխատանքների թիվը)*՝ **70 միավոր:**

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ *«Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, Հունվար 2011»* («Խորհրդատուների Ուղեցույցներ» *(Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011)*), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունները հետ **համատեղ ձեռնարկության** կամ **ենթախորհրդատվության** ձևով իրենց որակավորումներն ուժեղացնելու նպատակով *(խնդրում ենք հստակ նշել միավորման կարգավիճակը, օրինակ՝ «Համատեղ ձեռնարկություն» կամ «Ենթախորհրդատու»)*:

Խորհրդատուի ընտրությունն իրականացվելու է **“Խորհրդատուների Որակի վրա Հիմնված Ընտրության (CQS)” մեթոդով**, որը սահմանվում է Խորհրդատուների Ուղեցույցներում:

Շահագրգիռ Խորհրդատուները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ «ՋՏԾԻԳ» ՊՀ-ից ներքո նշյալ հասցեով՝ բոլոր աշխատանքային օրերին ժամը **10:00-ից մինչև 17:00 (երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ, բացի հանգստյան օրերից)**:

Շահագրգռվածության հայտը պետք է ներկայացվի **հայերեն** լեզվով գրավոր՝ **երկու (2)** վավերացված տպված օրինակներով կամ էլ. փոստով՝ **Adobe PDF** ձևաչափով ներքո նշյալ հասցեով **2014թ. ապրիլի 30-ին, ժ.17:00-ին կամ ավելի վաղ:** Շահագրգռվածության հայտի վրա պետք է հստակ նշվի՝ *«Շահագրգռվածություն հայտնելու հայտ “ՋՕԸ-ների հաշվապահական հաշվառումը վարող մասնագետների համար հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով հաշվետվությունների կազման ուսուցում” ISEP/CQS/SW-13/004Tr»:*

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Պրն. Աղիբեկ Ղազարյան, տնօրեն
Պրն. Արա Հովհաննիսյան, ֆինանսական կառավարման մասնագետ
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
ՀՀ, ք.Երևան 0033, Բաղրամյան պող. 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան), 278-845; 266-058 (գնումների բաժին)
Էլ. փոստ՝ aghazaryan@wsdp.am; cc: mcharyan@wsdp.am;

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Արա Հովհաննիսյանին՝ (37410) 278-845: